ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻԱՋԱԿՑՄԱՆԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«5» դեկտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-114/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի 22.11.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն 22.11.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն և «Արդատեկ» ՍՊԸ-ն մասնակցել են ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից «Ուսումնական արհեստանոցի համար նախատեսված ապրանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 25.10.2016թ. հայտերի բացման նիստում ուսումնասիրել է «Արդատեկ» ՍՊԸ-ի հայտով ներկայացված փաստաթղթերը և արձանագրել է, որ «Արդատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտում առկա փաստաթղթերը՝ ներառյալ գնային առաջարկը և հայտի ապահովումը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ 27.10.2016թ. նիստի արձանագրության 2.2 կետով գնահատող հանձնաժողովը մերժել է «Արդատեկ» ՍՊԸ-ի հայտը:

Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ 10.11.2016թ. գնահատող հանձնաժողովը նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով 09.11.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03/73-1/25145-16 գրությամբ ստացված մեթոդական օժանդակությունը, վերագնահատել է մասնակիցների հայտերը և «Արդատեկ» ՍՊԸ-ի հայտը գնահատել է բավարար:

Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ն հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարությունը Պատվիրատուին ուղղված 09.11.2016թ. 03/73-1/25145-16 գրությամբ՝ էլեկտրոնային փաստաթղթերը և էլեկտրոնային թվային ստորագրությունները կարգավորող «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին ՀՀ օրենքի փոխարեն, վկայակոչել է միայն «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքը և հայտնել, որ սահմանված չէ, որ հիշյալ փաստաթղթերը պետք է պարտադիր հաստատված լինեն տեսանելի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն, որպես բողոքի իրավական հիմք /ապացույց/, վկայակոչել է 14.12.2004թ. ընդունված «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին ՀՀ օրենքը, որտեղ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ էլեկտրոնային փաստաթղթի արտաքին ձևը էլեկտրոնային փաստաթղթերի վերարտադրման արդյունք է ցուցասարքի /դիսփլեյի/ էկրանին, թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա՝ տեսողական դիտարկման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով, ինպես նաև վկայակոչել է նույն օրենքի 5-րդ հոդվածը, որի համաձայն՝ էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակը գոյություն ունի միայն էլեկտրոնային կրիչի վրա: Էլեկտրոնային կրիչի վրա գրանցված և նույնական էլեկտրոնային փաստաթղթերի բոլոր օրինակները համարվում են

բնօրինակներ և ունեն հավասար իրավական նշանակություն: Եթե պահանջվում է ներկայացնել էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակը, ապա այդ պահանջը համարվում է բավարարված, եթե՝ էլեկտրոնային փաստաթուղթն առանց բովանդակային փոփոխությունների հնարավոր է ներկայացնել արտաքին ձևով՝ հատուկ տեխնիկական գիտելիքներ չունեցող անձի ընկալման համար մատչելի և հասկանալի ձևով:

Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն հայտնել է նաև, որ 19.10.2016թ «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի հոդված 1-ով նշված է, որ էլեկտրոնային փաստաթուղթը դա տեղեկություն է գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով՝ վավերացված էլեկտրոնային ստորագրությամբ:

Ըստ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի՝ «Արդատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկությունները չեն կարող համարվել էլեկտրոնային փաստաթուղթ, քանի որ չեն բավարարում «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին օրենքի պահանջներին, մասնավորապես՝ «Արդատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկություններում բացակայում է թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա՝ տեսողական դիտարկման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով էլեկտրոնային ստորագրությունը:

Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն գտել է, որ խախտվել է Ընթացակարգի հրավերի 7.9 կետով սահմանված պահանջը, այն է՝ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինպես նաև նշել է, որ «Գնումներ իմասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է՝

1. կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2016թ. թիվ 4 և

15.11.2016թ. թիվ 5 արձանագրություններով կայացրած որոշումները և «Արդատեկ» ՍՊԸ-ի հետ պայմանագրի կնքման գործընթացը:

2. «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2016թ. կայացրած թիվ 2 որոշման արձանագրության 2.2 կետը թողնել անփոփոխ:

3. «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.11.2016թ. ժամը 16:40-ին ԳԲԽ-114/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած քննարկման ժամանակ Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացուցիչը բողոքը պնդել է ամբողջությամբ:

Նիստի ժամանակ ԳԲԽ-114/16 բողոքը քննող հանձնաժողովը Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացուցչին խնդրել է, որպեսզի վերջինս հայտնի, արդյոք պնդում է 22.11.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին բողոքով ներկայացված պահանջները: Ի պատասխան՝ ներկայացուցիչը խնդրել է, որպեսզի Խորհրդի կողմից՝ 22.11.2016թ. Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքով կայացվեն հետևյալ որոշումները՝

1. անփոփոխ թողնել «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2016թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.2 կետը,

2. «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի 22.11.2016թ. բողոքի վերաբերյալ 28.11.2016թ. թիվ 04/9504-16 գրությամբ Կենտրոն է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող բոլոր անհարժեշտ փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2016թ. 03/73-1/25145-16 և «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ի (այսուհետնաև՝ ԷԿԵՆԳ ՓԲԸ) 08.11.2016թ. թիվ 152/11.16 գրությունների պատճենները:

Վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Արդատեկ» ՍՊԸ-ի հայտը գնահատելիս՝ առաջնորդվել է ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված մեթոդական օժանդակությամբ և ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի կողմից տրված պարզաբանմամբ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 28.11.2016թ. ժամը 16:40-ին ԳԲԽ-114/16 բողոքի շրջանակներում տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուն չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲԽ-114/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-114/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ կրթության և գիտության նախարարության կարիքների համար «Ուսումնական արհեստանոցի համար նախատեսված ապրանքների» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով՝ www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով, հայտ են ներկայացրել Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ն և «Արդատեկ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.10.2016թ. ժամը 09:30-ի նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Արդատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ հայտում առկա փաստաթղթերը՝ ներառյալ գնային առաջարկը և հայտի ապահովումը, հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ինչի հիման վրա գնահատող հանձնաժողովը 27.10.2016թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 2 արձանագրության /շարունակություն/ 2.2 կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժել է՝ հրավերով սահմանված պահանջներին չբավարարելու հիմքով:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2016թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատման գործընթացը կասեցվել է, քանի որ գնահատման ընթացքում առաջացել են մի շարք վիճելի հարցեր՝ պայմանավորված ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի

էլեկտրոնային թվային ստորագրության հետ և որոշվել է այն շարունակել նշված հարցերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից համապատասխան մեթոդական օժանդակություն ստանալուց հետո:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2016թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով 09.11.2016թ. ՀՀ ֆինանսների նախարարության 03/73-1/25145-16 գրությամբ ստացված մեթոդական օժանդակությունը և ԷԿԵՆԳ ՓԲԸ-ից ստացված թիվ 152/11.16 գրությամբ տրված պարզաբանումը, որոշել է վերանայել «Արդատեկ» ՍՊԸ-ի հայտը մերժելու և Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին որոշումները՝ վերագնահատելով մասնակիցների հայտերը նաև armeps համակարգով:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 15.11.2016թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը, որոշել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Արդատեկ» ՍՊԸ-ին՝ 1-3-րդ, 7-րդ և 9-14-րդ չափաբաժինների մասով, իսկ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով:

6. ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.11.2016թ. թիվ 03/73-1/25145-16 գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը՝ «ՀՀ կառավարության 10.02.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնում կատարելու ժամանակ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Այսինքն նշված կետով սահմանված չէ, որ հիշյալ փաստաթղթերը պետք է պարտադիր հաստատված լինեն տեսանելի էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ եթե մասնակիցը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը սահմանված կարգով հաստատել է էլեկտրոնային թվային

ստորագրությամբ, ապա այն համարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

7. ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն 08.11.2016թ. թիվ 152/11.16 գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը՝ «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված էլեկտրոնային փաստաթղթի գործիքային վահանակում երևում են ստորագրող անձի և էլեկտրոնային թվային ստորագրությունն անձի ձեռագիր ստորագրության էլեկտրոնային տարբերակը չէ և նախատեսված չէ համակարգչի էկրանին կամ թղթի վրա արտացոլվելու համար: Էլեկտրոնային թվային ստորագրությունը տեսանելի պատկեր չէ, և ստորագրության հատվածում որևէ պատկերի արտացոլումն էկրանին կամ տպված էլեկտրոնային փաստաթղթի վրա կախված է գործածվող համակարգչային ծրագրերից: Այնպես որ Համակարգչի էկրանին կամ տպված էլեկտրոնային փաստաթղթի վրա՝ ստորագրության հատվածում որևէ պատկեր չարտացոլվելը չի նշանակում, որ տվյալ էլեկտրոնային փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և վավեր, իրավական հետևանքներ առաջացնող փաստաթուղթ չէ»:

8. Նիստի ժամանակ ԳԲԽ-114/16 բողոքը քննող հանձնաժողովը Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացուցչին խնդրել է, որպեսզի վերջինս հայտնի, արդյոք պնդում է 22.11.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին բողոքով ներկայացված պահանջները: Ի պատասխան՝ ներկայացուցիչը խնդրել է, որպեսզի Խորհրդի կողմից՝ 22.11.2016թ. Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքով կայացվեն հետևյալ որոշումները՝

1.անփոփոխ թողնել «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2016թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.2 կետը,

2. «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին:

<u>4. ԳԲԽ-114/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի 22.11.2016թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության 28.11.2016թ. թիվ

04/9504-16 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը (այսուհետև նաև՝ Հրավեր), Պատվիրատուին ուղղված ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2016թ. թիվ 03/73-1/25145-16 և ԷԿԵՆԳ ՓԲԸ-ի 08.11.2016թ. թիվ 152/11.16 գրությունները, «Գնումների մասին» ՀՀ օրենքը (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը (այսուհետ նաև՝ Կարգ), «Արդատեկ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, գտնում է, որ Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի 22.11.2016թ. ներկայացրած բողոքը ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, ***հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ,

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում պատվիրատուի կամ գնահատող հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը,

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց սույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Սույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու

հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա,

4) եթե, սույն հոդվածի 3-րդ մասի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝ ա. Պայմանագրի կատարմա սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ) բ. պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում,

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատժամիջոցը,

6) հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար,

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

Կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելու դեպքերում Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս ***<u>փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ:</u>***

Հրավերի 7.9 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ

ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են ***էլեկտրոնային թվային ստորագրությամբ:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.11.2016թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ գնահատման գործընթացը կասեցվել է, քանի որ գնահատման ընթացքում առաջացել են մի շարք վիճելի հարցեր՝ պայմանավորված ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի էլեկտրոնային թվային ստորագրության հետ և որոշվել է այն շարունակել նշված հարցերի վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարությունից համապատասխան մեթոդական օժանդակություն ստանալուց հետո:

Ի պատասխան Պատվիրատուի 02.11.2016թ. թիվ 04/193/13841-16 գրությանը՝ որով Պատվիրատուն խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը հայտնել, արդյոք պարտադիր է, որ մասնակցի հայտում առկա փաստաթղթերը, ներառյալ գնային առաջարկը, տուժանքի ձևով հայտի ապահովումը և վճարման պահանջագիրը, հաստատված լինեն տեսանելի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարությունը 09.11.2016թ. թիվ 03/73-1/25145-16 գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը. «ՀՀ կառավարության 10.02.2016թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ կետի 9-րդ ենթակետի համաձայն՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով գնում կատարելու ժամանակ ՀՀ ռեզիդենտ հանդիսացող մասնակիցներն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը զետեղված է «Նույնականացման քարտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում: Նշված կետով սահմանված չէ, որ հիշյալ փաստաթղթերը պետք է պարտադիր հաստատված լինեն տեսանելի էլեկտրոնային թվային ստորագրությամբ»:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ հայտնել է նաև, որ եթե մասնակիցը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով հայտ ներկայացնելիս փաստաթղթերը սահմանված կարգով հաստատել է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա այն համարվում է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող:

ԷԿԵՆԳ ՓԲԸ-ն 08.11.2016թ. թիվ 152/11.16 գրությամբ Պատվիրատուին հայտնել է հետևյալը. «Էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված էլեկտրոնային փաստաթղթի գործիքային վահանակում երևում են ստորագրող անձի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին տվյալներ: Էլեկտրոնային թվային ստորագրությունն անձի ձեռագիր ստորագրության էլեկտրոնային տարբերակը չէ և նախատեսված չէ համակարգչի էկրանին կամ թղթի վրա արտացոլվելու համար: Այն էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն է, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար: Իսկ էլեկտրոնային փաստաթուղթն էլեկտրոնային ձևով ներկայացված տեղեկություն կամ հաղորդագրություն է, որի պաշտպանվածությունն ապահովելու նպատակով այն կարող է ներառել մեկ կամ մի քանի էլեկտրոնային թվային ստորագրություններ (օրինակ՝ անհրաժեշտության դեպքում փաստաթուղթը կարող է երկկողմանի հաստատվել): Այսինքն՝ Էլեկտրոնային թվային ստորագրությունը տեսանելի պատկեր չէ, և ստորագրության հատվածում որևէ պատկերի արտացոլումն էկրանին կամ տպված էլեկտրոնային փաստաթղթի վրա կախված է գործածվող համակարգչային ծրագրերից: Ընդ որում, ըստ «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի, էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության: Էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակը գոյություն ունի միայն էլեկտրոնային կրիչի վրա, իսկ էլեկտրոնային փաստաթղթի ներկայացման արտաքին ձևով՝ թղթի վրա ստեղծված փաստաթղթերը համարվում են էլեկտրոնային փաստաթղթի պատճեններ (եթե օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացված է դրանց համապատասխանությունը բնօրինակին): Այնպես որ համակարգչի էկրանին կամ

տպված էլեկտրոնային փաստաթղթի վրա՝ ստորագրության հատվածում որևէ պատկեր չարտացոլվելը չի նշանակում, որ տվյալ էլեկտրոնային փաստաթուղթը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ և վավեր, իրավական հետևանքներ առաջացնող փաստաթուղթ չէ»:

Ելնելով վերոգրյալից՝ Կենտրոնը գտնում է, որ անհիմն է Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքի այն պնդումը, որ «Արդատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկությունները չեն կարող համարվել էլեկտրոնային փաստաթուղթ, քանի որ չեն բավարարում «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության» մասին օրենքի պահանջներին, մասնավորապես՝ «Արդատեկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեղեկություններում բացակայում է թղթի կամ էլեկտրոնային կրիչից տարբերվող որևէ այլ նյութական առարկայի վրա՝ տեսողական դիտարկման համար մատչելի տեսքով և ընկալման համար հասկանալի ձևով էլեկտրոնային ստորագրությունը:

Նիստի ժամանակ ԳԲԽ-114/16 բողոքը քննող հանձնաժողովը Գիրգոր Այվազյան Ա/Ձ-ի ներկայացուցչին խնդրել է, որպեսզի վերջինս հայտնի, արդյոք պնդում է 22.11.2016թ. գնումների բողոքարկման խորհրդին բողոքով ներկայացված պահանջները: Ի պատասխան՝ ներկայացուցիչը խնդրել է, որպեսզի Խորհրդի կողմից՝ 22.11.2016թ. Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքով, կայացվեն հետևյալ որոշումները՝

1. անփոփոխ թողնել «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2016թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.2 կետը,

2. «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին:

Ինչ վերաբերում է Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքով ներկայացրած 1-ին պահանջին՝ անփոփոխ թողնել «ՀՀԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.10.2016թ. նիստի թիվ 2 արձանագրության 2.2 կետը, ապա այս կապակցությամբ Կենտրոնը հայտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժովի 27.10.2016թ. նիստի թիվ 2 արձանագրությունը /շարունակություն/ Պատվիրատուի կողմից համարվել է ուժը կորցրած (արձանագրություններ թիվ 3, 4, 5), ուստի Կենտրոնը գտնում է, որ ուժը կորցրած ճանաչված որոշումը չի կարող կրկին դադարեցվել:

Ինչ վերաբերում է Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի բողոքով ներկայացրած 2-րդ պահանջին՝ «ՀՀ ԿԳՆՊԸԱՊՁԲ-16/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ին, ապա Կենտրոնը հայտնում է, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ նման որոշում կայացնելու լիազորություն չունի, ուստի այս մասով բողոքը ևս ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Գրիգոր Այվազյան Ա/Ձ-ի 22.11.2016թ. ներկայացրած բողոքը մրժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝ Հ.Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-114/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Տ.Գևորգյան